**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2022 թվականի N 677-Ա

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/91» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022թ. սեպտեմբերի 5-ի N 3 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «Հարսնածոր» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների տուժանքի մասին համաձայնագրերը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Հարսնածոր» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, մասնակի էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացման կապալային աշխատանքների կատարման N ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/91 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 22

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2022 թվականի N 678-Ա

## ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՏԱՇԻՐ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ,ԹԻՎ 333 ՀԱՍՑԵՈՒՄ « ԱԼԱՇԿԵՐՏ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱԼԱՇԿԵՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ի դեմս տնօրեն Սարգիս Հարությունյանի (անձնագիր՝ 008695157, տրված՝ 17.05.2016-ին) դիմումը (մուտք՝ 16.09.2022-ի ՄԴ-579-22), անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 22022022-06-0022 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի , 9-րդ, 11-րդ, 17-րդ կետը և 18-րդ կետի բ) ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով և հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2022G5KLMA ծածկագիրը Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետը, 50-րդ, 60-րդ և 62-րդ կետերը, և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 93-Ն որոշումով՝ նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Երևանյան փողոց,թիվ 333 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0254-0031) «ԱԼԱՇԿԵՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,1209 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 41.20 քմ մակերեսով դեղատունը, 6.40 քմ մակերեսով սանհանգույցը և 15.70 քմ մակերեսով ջրահեռացման հորը, ընդհանուր 63.3 քմ մակերեսով

1) Դեղատան համար՝ 84708 (ութսունչորս հազար յոթ հարյուր ութ) ՀՀ դրամ

2) Սանհանգույցի համար՝ 13159 (տասներեք հազար հարյուր հիսունինը) ՀՀ դրամ

3)Ջրահեռացման հոր համար՝ 32280 (երեսուներկու հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ 1.Համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Հողամասի սահմանները որոշվում են՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող «ԱԼԱՇԿԵՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝ 130147 (հարյուր երեսուն հազար հարյուր քառասունյոթ դրամ) ՀՀ դրամ:

4. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած: 5. Հողամասին ՀՀ Լոռու մարզ, ք.Տաշիր,Երևանյան փողոց, 11-րդ թաղամաս, 333 լվացման կետ հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր,Երևանյան փողոց թիվ 333 առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտ հասցեն (փոստային դասիչ 21-02):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 23

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 սեպտեմբերի 2022 թվականի N 679-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետը, 50-րդ, 60-րդ կետը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-008-0209-0001 կադաստրային ծածկագիր, 0,00400 հա նոր առաջացող գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան փողոց, թիվ 116/8 ավտոտնակ (փոստային դասիչ 2101) հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2022 թվականի N 680-Ա

## ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՏԱՇԻՐ, Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նորայր Գևորգի Մարտիրոսյանի (անձնագիր՝ AN0336427, տրված՝ 23 . 01 . 2013-ին) դիմումը (մուտք՝ 10.09.2022-ի ՄԴ-583-22), անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 1691497 վկայականը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառվարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի, 8-րդ, 9-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով և հիմք ընդունելով «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2022R7HWUL ծածկագիրը Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետը, 50-րդ, 60-րդ և 62-րդ կետերը, և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 93-Ն որոշումով՝ նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Վ. Շատալով փողոց, թիվ 5 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0099-0002) Նորայր Գևորգի Մարտիրոսյանի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,096 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 32 քմ մակերեսով անասնաշենքը համաձայն «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի

1) Անասնաշենք 32 քմ.

2. Հողամասի սահմանները որոշվում են՝ համաձայն «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող Նորայր Գևորգի Մարտիրոսյանին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել (900 275 081 124 հաշվեհամարին) ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝
1) Անասնաշենքի համար 32896 ՀՀ դրամ

4. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Հողամասին ՀՀ Լոռու մարզ, ք.Տաշիր, Շատալովի փողոց, տուն թիվ 5 բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Մ. Խորենացի փողոց թիվ 5 բնակելի տուն հասցեն (փոստային դասիչ 21-01):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 28
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 սեպտեմբերի 2022 թվականի N 681-Ա

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-22/94» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022թ. սեպտեմբերի 12-ի N 3 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «Իրտիգ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների տուժանքի մասին համաձայնագրերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Իրտիգ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, մասնակի էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-22/94 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 28
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2022 թվականի N 682-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3 մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N94-Ն որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Բաժին 1, խումբ 1, դաս 1-ի 4212 հոդվածից 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամը տեղափոխել Բաժին 6, խումբ 1, դաս 1-ի 4169 հոդված:

2. Բաժին 6, խումբ 4, դաս 1-ի 4251 հոդվածից 500000 (հինգ հարյուր հազար) դրամը տեղափոխել 4269 հոդված:

3. Բաժին 8, խումբ 2, դաս 1-ի 4111 հոդվածից 15000 (տասնհինգ հազար) դրամը տեղափոխել 4213 հոդված:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 30
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2022 թվականի N 683-Ա

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N88 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Փոփոխել Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29092022-06-0018 վկայականը, տրված 29.09.2022-ին) 76,86 քմ մակերեսով «Ավտոտնակ» շինության գործառնական նշանակությունը արտադրական «Արհեստանոց» գործառնական նշանակության:

2. Սույն որոշումից ծագող փոփոխությունները ենթակա են գրանցման Կադաստրի Կոմիտեր Լոռու մարզային ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 30
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2022 թվականի N 684-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումով հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1055-Ն որոշումը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող 06-008-0111-0046 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 0,1044 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել արդյունաբերական օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 30
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2022 թվականի N 685-Ա

## ՍԻՐՈՒՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Սիրուն Արամայիսի Հակոբյանի դիմումը (մուտք՝ 16.09.2022-ի ՄՀ-121-22)

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Սիրուն Արամայիսի Հակոբյանին տալ ավտոտնակի կառուցման նախագծման թույլտվություն:
2. Սիրուն Արամայիսի Հակոբյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 30
ք.Տաշիր